Այս նյութերը քննարկվեցին ամբողջ խմբի կողմից: Հաստատված նյութերը պատրաստվելու են մայիսի համաժողովի ժամանակ օգտագործվելու նպատակով: Համաժողովի վերջում հիմնական խոսնակները ներկայացրեցին իրենց նյութերի համառոտ տարբերակները, որոնք ուղեկցվեցին քննարկումներով:

ՎԱՉԳԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՔԵՍԱԲԼՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարբերությունների բաժինը տեղեկացնում է, որ սույն թվականի փետրվարի 14-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից նշանակված պատվիրակությունը, որի անդամներն էին Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը և Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը, հանդիպեց Ղպտի Ուղղափառ Եկեղեցու գահակալ Նորին Սրբություն Շենուդա Գ Պատրիարքի հետ:

Հայ Եկեղեցու ներկայացուցիչները երեքժամյա հանդիպման ընթացքում Նորին Սրբությանն են ներկայացրել Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ-ի պատրաստակամությունը միջնորդ հանդիսանալու՝ Ղպտի Ուղղափառ և Եթովպիայի Թևահեղո Եկեղեցիների միջև առաջացած խնդիրները լուծելու համար:

Առաջարկվել է նաև ստեղծել Արևելյան Հին Եկեղեցիների ներկայացուցիչներից բաղկացած մնայուն գործող մի հանձնաժողով Եկեղեցիների ընտանիքին վերաբերող զանազան խնդիրների քննարկման և լուծումներ առաջարկելու նպատակով:

Այս ընթացքում Մայր Աթոռի պատվիրակները այցելեցին նաև Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի և հյուրընկալվեցին առաջնորդի և թեմական իշխանությունների կողմից:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ